Շրջանառության մեջ է դրվում նոր հուշադրամ

19.10.2026

2026 թվականի հոկտեմբերի 20-ին ՀՀ կենտրոնական բանկը շրջանառության մեջ է դնում «Քարերի սիմֆոնիա» բնական հուշարձանին նվիրված արծաթե հուշադրամը։

«Քարերի սիմֆոնիա» բնական հուշարձանին նվիրված հուշադրամ

«Քարերի սիմֆոնիան» Հայաստանի բնության եզակի հուշարձաններից է, որն աչքի է ընկնում իր համաչափ բազալտե սյուներով՝ հիշեցնելով երգեհոնի խողովակներ։ Հուշարձանն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ցանկում։

Դիմերես՝ ՀՀ զինանշանը և «Գեղարդի առյուծ» կոթող-ուղենիշը դեպի Գառնի (քանդակագործ՝ Ա. Հարությունյան, ճարտարապետ՝ Ռ. Իսրայելյան, 1958 թ.)։ Դարձերես՝ «Քարերի սիմֆոնիա» բնական հուշարձանի պատկերը։

Հուշադրամը հատվել է Գերմանիայի «B.H. Mayer Mint» դրամահատարանում։

Անվանական արժեքը	3000 դրամ
Մետաղը/հարգը	արծաթ 999^{0}
Քաշը	93,3 գ
Տրամագիծը	45,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Թողարկման քանակը	500 հատ

Թողարկման տարեթիվը	2026

Կարդացեք ավելին բաժնում: